ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

1111/
.05.2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՎԱՐԴԱՆ ԱՐԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արամյան

Ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության ս.թ. ապրիլի 5-ի թիվ 04/5-2/6153-18 գրության և հիմք ընդունելով «Միջազգային պայմանագրերի մասին» 2018թ. մարտի 23-ի թիվ ՀՕ-213-Ն ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ և 26-րդ հոդվածների դրույթները՝ կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև 2018թ. ապրիլի 3-ին ստորագրված՝ «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկողության կատարելագործում» ծրագրի ֆինանսավորման համար Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամի միջոցներից դրամաշնորհի տրամադրման մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) բնօրինակի հաստատված պատճենը և Համաձայնագրի հաստատման արտաքին քաղաքական նպատակահարմարության մասին ՀՀ արտաքին գործերի նախարարության եզրակացությունը: Միաժամանակ, հայտնում ենք, որ Համաձայնագրի պաշտոնապես հաստատված հայերեն թարգմանությունը կներկայացվի լրացուցիչ՝ աշխատանքային կարգով:

Հայտնում ենք, որ Համաձայնագրի հետագա ընթացքն անհրաժեշտ է ապահովել Օրենքի 11-րդ հոդվածի դրույթներով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք «Համաձայնագիրը վավերացնելու մասին» ՀՀ օրենքի, «Համաձայնագիրը հաստատելու մասին» Հանրապետության նախագահի հրամանագրի, «Համաձայնագիրը վավերացնելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մասին» ՀՀ Կառավարության որոշման, «Համաձայնագիրը հաստատելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրի նախագծի մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագծերը՝ ըստ կիրառելիության օգտագործելու նպատակով:

Առդիր՝ 1 փաթեթ:

May 7 2018 5:03 PM

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆ

Կատարող՝ Սոնա Գևորգյան
Իրավաբանական վարչություն հեռ.՝ 060-620/458

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2018Թ. ԱՊՐԻԼԻ 3-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՕՂԱԿՈՒՄ ՈՉ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ (ՎԱՎԵՐԱՑՄԱՆ) ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև 2018թ. ապրիլի 3-ին ստորագրված՝ «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկողության կատարելագործում» ծրագրի ֆինանսավորման համար Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամի միջոցներից դրամաշնորհի տրամադրման մասին» համաձայնագիրը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին: Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը նպատակահարմար է համարում նշված համաձայնագրի հաստատումը (վավերացումը):

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

**ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆ**